Գուշակության մի այլ ձևն էլ այսպես էր։ Աղջիկները վաղ առավոտյան կտուրին դնում էին փոխրնձէ պոնտի՝ գնդիկ և դիտում, թե թռչունը, կտցելով այդ պոնտը, ո՞ւմ տան վրա կիջնի։ Այն տնից էլ լինելու է նշանածը։ Տղաներն այդպիսի եղանակներով գուշակություններ չէին անում։ Արդյո՞ք որևէ կապ կար այս գուշակությունների և ս. Սարգսի աղջիկ փախցնելու առասպելի մեջ. արդյո՞ք այդ աղջիկ փախցնելն առևանգման հիշատակը չէ՞, ամուսնական կապեր հաստատելու հին եղանակի, երբ աղջիկը չգիտեր՝ ո՞վ է լինելու իրեն փախցնողը, այն էլ անշուշտ ձի հեծած, և ինքն էլ՝ ս. Սարգիսը մի այդպիսի առևանգող և ձիով սլացող երիտասարդ չէ՞։ Աղջիկների գուշակություններն էլ, թե ո՞վ է լինելու իրենց փեսացուն, անշուշտ կապ ունեն բնության մեջ երկու սեռերի իրար հետ միացման հետ։ Նախնական մտածողության ապագա հետազոտողների առջև դրված է և այն հարցը՝ թե արդյոք ս. Սարգսի գարնանամուտի տոնը կապ չունի՞ այն ըմբռնման հետ, որի մեջ երկինքն արու է, երկիրը կին և գարնանը կատարվում է նրանց հարսանեկան միախառնումը, այն փոթորիկների հետ շաղկապված, որոնցից հետո եղանակի մեջ համեմատական հանգստություն է տիրում, տեղի է ունենում գետնի հղիացումը բույսերով և սկսվում է կենդանական աշխարհի մեջ էլ ծննդաբերության ժամանակաշրջանը, դոլը[24]։

Պարէկէնթան։ Բարեկենդանը սովորաբար տևում է երկու շաբաթ, նախորդում է մեծ պասին, սակայն բուն Բարեկենդանը համարվում է վերջին երեք-չորս օրը։ Մի այլ աշխատությանս մեջ[25] այս անունը ես աշխատել եմ բացատրել որպես ողջույն, մաղթանք՝ ուղղված վերակենդանացող բնության։ Այդ ողջույնը բխում է նույն մտայնությունից, որպես և բարի լո՛ւյս, բարի գիշե՛ր բարեմաղթությունները, որոնք բառի մագիկ զորությամբ նպատակ ունեին սկսվող լույսին կամ գիշերին բարի կատարում ներազդել[26]։ Ելնելով այն հավատքից, որ գործի սկզբնավորության բնույթով պայմանավորվում է նաև նրա շարունակությունը, որ ուրախ սկզբնավորությունն առաջ է բերում ուրախ շարունակություն և հաջող ավարտ, աշխատում էին բնության բարի արթնացումը խրախուսել երկարատև պահեցողությամբ, ինքնազրկությամբ, ինքնազոհաբերությամբ։ Արթնացող բնության այդ երկունքի ժամանակամիջոցից առաջ աշխատում էին ապահովել և ուրախ կենդանացումը և ապագա բարեբեր՝ պտղաբեր գործունեությունն ընդհանուր խրախճանքով։ Մարդկանց այս հասարակօրեն ուրախությունն արծարծելու էր նաև բնության ուրախությունը։ Հավատում էին, որ որքան ավելի կուշտ ուտեն մարդիկ և ավելի ուրախ և անհոգ անցկացնեն բնության արթնացման սկզբի օրերը, այնքան բնության մեջ էլ ուրախություն կգրգռվի և առատություն տալու տրամադրությանը կհաջորդի առատաձեռնություն, բազմատվություն։ Այդ էր պատճառը, որ Բարեկենդանը

---

[24] Ս. Սարգսի պաշտամունքի վայրերը շատ էին հատկապես Լոռում, սկսած Գյուլագարակ գյուղից մինչև Ղազախի Գագա ս. Սարգիսն ու մինչև Տփղիսի արևմտյան թաղը, որտեղ նրան նվիրված էր ս. Սարգսի եկեղեցին։ Ս. Սարգիսը պաշտվում էր նաև թուրքերի և քրդերի մեջ Խզդը-նաբի անունով։ Նրա մասին Ե. Լալայեանի գրանցած փոփոխակը նրա ձին պատկերում է քուռակի հետ, որը ցեխն է խրվում և ցեխի միջից աղմուկով հանվում, Սիսիան, էջ 150։

[25] Армяне нагорного Карабаха, ձեռագիր։

[26] Հմմտ. Բար–պտուղ տերմինի հետ, որից բաղկացած են մի շարք բառեր և դարձվածքներ։ Օրինակ՝ բարյա՛վ–բարև, այսինքն՝ «լինե՛ս պտուղով», Բարեկենդան–պտուղների կենդանացում, նուբար-նոր պտուղ են։